

ԹՎԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՂԱՅՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՅՎԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս. Կ. ԽԱՆՊԱՆՅԱՆ

ԳԴԴ դասախոս

Թվականը հայ քերականագիտության մեջ երկար ժամանակ առանձին խոսքի մաս չի համարվել: Ելնելով խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքից՝ թվականը համարվել է ածականի մի տեսակ, որովհետև «բուն ածականների նման գործածվում է գոյականների հետ որպես որոշիչ և ածականից տարբերվում է միայն իր ընդհանուր իմաստով. եթե ածականը ցույց է տալիս առարկայի որակային հատկանիշ, ապա թվականը ցույց է տալիս առարկայի քանակային հատկանիշ (հմմտ. գեղեցիկ աղջիկ և երկու աղջիկ): Սակայն բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս կարևոր նշանակություն ունի նրանց բառային ընդհանուր իմաստի հաշվառումը: Եվ ելնելով հենց դրանից էլ, ինչպես նաև ձևաբանական, շարահյուսական ու առանձնապես բառակազմական որոշ առանձնահատկություններից՝ թվականը հայ քերականության վերջին շրջանում առանձնացվում է որպես առանձին խոսքի մաս»¹:

Թվականը շարահյուսորեն բնորոշվում է նրանով, որ գոյականի հետ հանդես է գալիս որպես որոշիչ: Թվականով արտահայտված որոշիչները ցույց են տալիս քանակային կամ կարգային հատկանիշ և արտահայտվում են թվականների բոլոր տեսակներով: Թվականական որոշիչները որոշյալի նկատմամբ հիմնականում հանդես են գալիս նախադաս: Երբեմն լինում են դեպքեր, որ հանդես են գալիս հետադաս:

Ստորև կփորձենք թվական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցությունները խմբավորել և ներկայացնել ըստ թվականների իմաստային դասակարգման:

- Քանակական թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ որոշիչները ցույց են տալիս առարկաների կոնկրետ թիվը, քանակը - հազար շեփոր, երկու հազար տասնչորս թվական, երեսուն ուսանող, քառասուն տարեկան, յոթ աղբյուր և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ գոյականական բառակապակցություններում քանակական թվականը որոշիչ է լինում հատ, միավոր, օրինակ, կտոր, հատոր, զույգ, գլուխ և նման գոյականների ուղեկցությամբ — հինգ հատ հաց,

¹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Երևան, 2002, էջ 161:

հազար օրինակ գիրք, հինգ հարյուր զույգ կոշիկ, տասը կտոր խմորեղեն, քսան գլուխ ոչխար և այլն:

Պետք է կարողանալ ճիշտ գործածել հատ բառով և թվականով կազմված բառակապակցությունները. «Դրանք դրվում են միայն իրի անունների վրա՝ երեք հատ տետր, չորս հատ ոչխար, և ճիշտ չէ դնել անձի անունների վրա: Սխալ է ասել՝ երեք հատ բժիշկ, չորս հատ ոստիկան և այլն: Օրինակ, «Երեք հատ ծագ ցույց կտամ քեզ» (Թ.264) նախադասության մեջ երեք հատը ճիշտ է գործածված, քանի որ ծագ-ը իրի անուն է»² (Ռ. Ի. Էջ 136):

Քանակական թվականը գոյականական բառակապակցություններում կարող է որոշիչ դառնալ նաև գոյականաբար, հոլովված, ինչպես՝ հազարներով մարդիկ, հարյուրներով պարտք, հինգերով քննություն, յոթով թիվ, միլիոնների վնաս և այլն:

- Դասական թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ որոշիչները ցույց են տալիս առարկաների թվային կարգը - իններորդ ալիք, առաջին սեր, վեցերորդ զգայարան, չորրորդ հարկ, երրորդ կուրս, ութերորդ վաշտ, առաջին թե երկրորդ դասարանցի և այլն:

- Դասական թվականի արժեք ունեցող քանակական թվականներով արտահայտված որոշիչ լրացում ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ որոշիչը դրվում է հետադաս - հատոր 1, էջ 123, շենք 57, մուտք 2, բնակարան 13:

- Առարկայի որակային հատկանիշ արտահայտող դասական թվականով որոշիչ լրացում ունեցող գոյականական բառակապակցություններ - առաջին շենք, երկրորդ մաս, հինգերորդ աղջիկ և այլն:

Եթե որոշիչ դերում միաժամանակ հանդես են գալիս դասական և քանակական թվականներ, նախ՝ դրվում է դասականը, ապա՝ քանակականը, ինչպես՝ առաջին երկու օրը, երկրորդ չորս ուսանողը և այլն:

- Կտորակային թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ որոշիչները ցույց են տալիս առարկաների որոշակի մասը: Սրանք հիմնականում գործածվում են մաս, բաժին և նման բառերի ուղեկցությամբ կամ էլ չափի միավորների հետ- մեկ քառորդ դրույք, երկու երրորդ մասը, երկու հինգերորդ բաժինը, երկու տասներորդ հեկտար, չորս իններորդ տոննա և այլն:

² Ռ. Իշխանյան, Արդի հարեների պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 136:

Նկատելի է, որ մաս և բաժին բառերը հանդես են գալիս միայն որոշյալ առնամբ և, եթե կոտորակային թվականի համարիչը մեկ բառն է, այն կարող է զեղչվել, իսկ մեկ երկրորդ և մեկ չորրորդ ձևերին կարող են փոխարինել կես և քառորդ բառերը, ինչպես՝ հինգերորդ մասը, վեցերորդ բաժինը, կես ժամ, կես գդալ, քառորդ ժամ, քառորդ բաժակ, քառորդ բաժին և այլն:

- Բաշխական թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ որոշիչները ցույց են տալիս առարկաների բաշխումը որոշ թվային քանակով - երեքական կոնֆետ, հնգական տետր, երկուական ուսանող, տասը-տասը փաթեթ, վեց-վեց բաժին և այլն:

- Մոտավոր թիվ արտահայտող որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններ- հինգ-վեց մարդ, տասը-տասներկու տարի, քսանից քսաներկու տարեկան, հիսունից վաթսուներկու տետր և այլն:

- Մերձավոր թիվ արտահայտող որոշիչ լրացում ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ քանակական թվականների վրա դրվում է մի մասնիկը - մի հիսուն հոգի, մի հազար զինվոր, մի հարյուր մարդ, մի երկու տարբերակ, մի հինգ տղա և այլն:

- Անորոշության, ընդհանրապես մեծ քանակության գաղափար արտահայտող որոշիչ լրացում ունեցող գոյականական բառակապակցություններ, որտեղ որոշիչն արտահայտվում է հազար, հազար ու մի բառերով - հազար չար ու շահ, հազար հարամի, հազար ջահելներ, հազար ու մի զիշեր, հազար ու մի կրակ ու ցավ, հազար ու մի հոգս և այլն:

Չետաբրքի է որոշյալի դրսևորումը թվական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններում: Քանակական թվականները որոշչի դերում կարող են թվացյալ կախման կապակցություն ստեղծել որոշյալի հետ. «Իրականում դա այնպիսի կապակցական հարաբերություն է, որը հստակ կանոնի չի ենթարկվում: Օրինակ, Բաֆֆին գրում է. «Երկու ծիավորներ անցնում էին Մուշի դաշտով» (Դ 7, 17). այստեղ երկու որոշչի որոշյալը դրված է հոգնակի՝ ծիավորներ, բայց սխալ չի լինի դնել նաև եզակի՝ «Երկու ծիավոր անցնում էին...»³:

Թվական որոշչի և որոշյալի միջև ստեղծվող կապակցության որոշ, թույլ արտահայտված կանոններ կան, որոնք լեզվում դեռ հստակորեն ամբողջացած չեն: Ստորև կփորձենք ներկայացնել մի քանի կանոններ.

- Քանակական թվական որոշչի որոշյալը միայն եզակի է դրվում այն դեպքում, երբ այդ թվականը մեկ // մի բառն է- մի բուռ, մեկ հայացք, մի համբույր և այլն:

³ Ռ. Իշխանյան, Արդի հարեների պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 137:

- Քանակական թվական որոշչի որոշյալը կարող է հոգնակի դրվել այն դեպքում, երբ այդ թվականը մեկից ավելի մեծ թիվ է նշանակում: Բայց նույն այդ մեկից ավելի նշանակող թվական որոշչի հետ որոշյալը կարող է նաև եզակի դրվել:

- Չափ, կշիռ, դրամ ցույց տվող գոյականները երկու և ավելի թիվ նշանակող թվական որոշչի հետ սովորաբար եզակի են դրվում, սակավ դեպքերում՝ հոգնակի: Այդպիսի գոյականներ են՝ մետր, կիլոմետր, սանտիմետր, գրամ, կիլոգրամ, տոննա, դոլար, եվրո, ռուբլի, տոկոս և այլն. օրինակ՝ «...հնարավորություն է տալիս օրական տնտեսել 10 մետրից ավելի, այդ թվում և թանկարժեք տեսակների գործվածքներ»։ այստեղ անհնար է ասել 10 մետրերից ավելի: «Նյութերի խնայողության հաշվին թողարկել են 50 տոննա մանվածք, 150 հազար մետր բամբակյա գործվածք»։ այստեղ էլ բացառված են «50 տոննաներ մանվածք և 150 հազար մետրեր բամբակյա գործվածք» ձևերը: Թեև ավելի սակավ դեպքերում հնարավոր է նաև որոշիչ թվականի հետ տոննա և մետր բառերի հոգնակի գործածությունը, ինչպես, օրինակ, «Մեծ դժվարությամբ հաղթահարեցինք վերելքի վերջին 50 մետրերը»:

Վերցնենք հետևյալ օրինակը. «Համախառն արտադրանքի յոթ ամիսների առաջադրանքը կատարվեց 105 տոկոսով և նախատեսվածից ավելի թողարկվեց 3 միլիոն 400 հազար ռուբլու արտադրանք»։ Այստեղ յոթ ամիսների առաջադրանքը կապակցությունը լեզվում տարբերակ ունի՝ յոթ ամսվա առաջադրանքը, այսինքն՝ այս դեպքում յոթ թվական - որոշչի հետ թվական որոշյալը կարելի է դնել և՛ հոգնակի, և՛ եզակի, մինչդեռ 105 տոկոսով-ը կամ 3 միլիոն 400 հազար ռուբլու-ն այստեղ չունեն 105 տոկոսներով կամ 3 միլիոն 400 հազար ռուբլիներ տարբերակները»⁴:

- Թվական + զույգ բառակապակցություն որոշիչը կարող է ունենալ և՛ եզակի, և՛ հոգնակի թվով որոշյալ, ինչպես՝ 15 զույգ կոշիկ, 15 կոշիկներ. «... ընտրությունը պայմանավորված է խոսքային միջավայրով: Բայց, օրինակ, հետևյալ նախադասության կոշիկ-ը կարող է միայն եզակի դրվել. «Նազիկ Բունիաթյանը օրական նախատեսված 20-ի փոխարեն կարում է 25 զույգ կոշիկ»։⁵:

- Չափ ու կշիռ ցույց տվող և մի քանի կարգի այլ գոյականներից բացի, մյուսները սովորաբար մեկից ավելի նշանակող թվական որոշչի հետ հավասարապես կարող են դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի՝ կախված խոսքային միջա-

⁴ Ռ. Իշխանյան, նշված աշխատ., էջ 137:

⁵ Նույն տեղում, էջ 138:

վայրի բնության, ոճային երանգից, երբեմն էլ՝ որոշյալին հաղորդվող իմաստային երանգից: Օրինակ՝ «Նա խոստացել էր առաջադրանքը կատարել նշված ժամկետից 6 օր շուտ»: այստեղ միակ ձևը *օր* որոշյալի եզակին է: Բայց սրան հակադրվում են նմանատիպ կառույցները՝ «Երբեք չենք մոռանա միասին անցկացրած այս 6 օրերը»:

- Մեկից ավելի քանակ ցույց տվող թվական որոշչի որոշյալը կարող է հոգնակի դրվել նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում ընդգծել որոշյալի հետ նշվող միավորներն առանձին-առանձին: Օրինակ՝ 10 ուսուցիչ և 10 ուսուցիչներ բառակապակցություններից առաջինում որոշիչը ցույց է տալիս սոսկ անձերի քանակը, իսկ երկրորդում կարծես ընդգծվում է նույն քանակի անձերի առկայությունն առանձին-առանձին, երբեմն էլ գուցե նաև հարգանք է մատուցվում նրանցից յուրաքանչյուրին:

Ահա այս կարգի հոգնակի որոշյալների օրինակներ. «Ընդգրկված են աշխատողների 20 երեխաներ», «Իրականացվում են 2 կուսակցությունների դեկավարների հանդիպումներ», «Բոլոր 13 ֆակուլտետներում սովորում են 2000 ուսանողներ»: Այս վերջին օրինակում ֆակուլտետներում որոշյալը հոգնակի է դրվել նաև *բոլոր* որոշչի թելադրանքով, որ ստեղծում է կախման կապակցություն:

- Վերը նշվեց, որ որոշ դեպքերում չափ ու կշիռ ցույց տվող գոյականներն էլ թվական որոշչի հետ կարող են դրվել հոգնակի: Դա նույնպես կատարվում է այն դեպքում, երբ հարկ է ընդգծել որոշյալի արտահայտած միավորներն առանձին-առանձին. օրինակ՝ «Ինձ համար արժեք չունեն քո ունեցած այդ 1000 դոլարները», «Նա կարողացավ մի ժամվա ընթացքում խմել զարեջրի այդ 10 լիտրերը» և այլն:

- Եթե նախադասության կառուցվածքը թույլ է տալիս թվականի որոշյալը դնել և՛ եզակի, և՛ հոգնակի, բայց արտահայտվողը հարկ չի համարում որոշյալի բովանդակությունը կազմող միավորներն առանձին-առանձին ընդգծել կամ հատկապես միտում է ունենում չընդգծելու, ապա որոշյալը դրվում է եզակի թվով. «5 տարվա ընթացքում...»: Այստեղ կարելի է նաև գրել «5 տարիների ընթացում...», սակայն արտահայտվողը չի կամեցել ընդգծել 5 տարիներից յուրաքանչյուրը և տարի-ն դրել է եզակի թվով:

- Թվականի որոշյալը հոգնակի է դրվում նաև այն դեպքում, երբ թվական որոշչի և որոշյալի միջև մի այլ լրացում կամ լրացումներ են լինում, ինչպես՝ 5 նորակառույց, բարձրահարկ շենքեր, 10 հարազատ ընկերներ, 7 երջանիկ,

անհոգ օրեր և այլն: Սակայն այս կանոնն էլ հետևողական չէ, և միջանկյալ լրացումների առկայությունը պարտադիր կարգով չէ, որ թվականի որոշյալը հոգակի է դարձնում: Քիչ չեն դեպքերը, երբ թվականի և նրա որոշյալի միջև լրացում է լինում, բայց որոշյալը եզակի է դրվում. 10 գերազանցիկ ուսանող, 100 իրանցի զինվոր, 20 փոքրիկ երեխա և այլն:

- Թվականի որոշիչը հոգնակի է դրվում մաս այն դեպքում, երբ որոշյալը գործածվում է հոդով կամ հոլովված է . 25 աշակերտներից(ս) յուրաքանչյուրը, 2 տղաներից(ս) մեծը, 5 ընկերներով գնացինք և այլն:

Որոշ դեպքերում էլ թվական որոշիչի որոշյալի քերականական թիվը պայմանավորված է լինում խոսքի ընդհանուր բովանդակության և կառուցվածքային առանձնահատկություններով, ինչպես մաս այլ գործոններով, որոնք կազմում են խոսողի կամ գրողի անհատական, այսպես ասած, լեզվական զգացողության, ոճի բաղադրիչները:

***Բանալի բառեր** - գոյականական բառակապակցություններ, թվական որոշիչ, որոշիչ-որոշյալ, իմաստային դասակարգում*

СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ ЧИСЛИТЕЛЬНОГО В ФУНКЦИИ ОПРЕДЕЛЕНИЯ В СУБСТАНТИВНЫХ СЛОВСОЧЕТАНИЯХ

С. К. ХАНДАНЯН

Преподаватель ГГУ

В статье представлены словосочетания с определениями, выраженными числительными, относящимися к разным сферам жизни и составляющим разные семантические группы.

THE PECULIARITIES OF THE NUMERAL -ATTRIBUTIVE SUPPLEMENTS IN NOMINAL WORD-COMBINATIONS

S. K. KHANDANYAN

GSU lecturer

The peculiarities of the numeral-attributive supplements in nominal word-combinations are presented in the article.

Different word combinations having relative numeral attributives concerning to the various spheres of life are grouped according to their semantic definition.